

Քաղաքաշինության վարչության ճարտարապետաշինարարական բաժնի հետ հաճախակի առնչվող հարցեր

ՀԱՐՑ - Համայնքի ղեկավարի կողմից, համայնքի վարչական սահմաններում, առանց հողի կատեգորիայի փոփոխության, հողատարածքների գործառնական նշանակության փոփոխություններ (համաձայն քաղաքացիների, ինչպես նաև իրավաբանական անձանց դիմումների):

Եթե համայնքը ունի ՀՀ կառավարության կողմից հաստատված գլխավոր հատակագիծ, ապա հաշվի առնելով քաղաքացու կամ իրավաբանական անձի դիմումը համայնքի ղեկավարը, համաձայն ՀՀ կառավարության 1998 թվականի հունիսի 30-ի N 479 որոշման պահանջների, պատրաստում է փաթեթ, որում ներառում է բացատրագիր, սխեմա, ճարտարապետահատակագծային առաջադրանք (ՃՀԱ) ու ներկայացնում մարզպետին:

Մարզպետի հանձնարարությամբ համապատասխան վարչության մասնագետների կողմից տեղում ուսումնասիրվում է առաջարկվող հողատարածքի գործառնական նշանակության փոփոխության նպատակահարմարությունը, եթե այն համապատասխանում է քաղաքաշինական նորմատիվատեխնիկական պայմաններին և նպատակահարմար է հետագա կառուցապատման նպատակով գործառնական նշանակության փոփոխությանը, ապա մարզպետը տալիս է իր համաձայնությունը, այն ուղղարկելով քաղաքաշինության նախարարություն՝ նախարարի համաձայնեցման:

ՀՀ քաղաքաշինության նախարարության համաձայնությունը ստանալուց հետո համայնքի ղեկավարի կողմից ընդունվում է համապատասխան որոշում հողի գործառնական նշանակության փոփոխության վերաբերյալ և թույլատրվում է կառուցապատումը:

Եթե տվյալ համայնքը չունի հաստատված գլխավոր հատակագիծ և գոտևորման նախագծեր, համայնքի վարչական սահմաններում, առանց հողի կատեգորիայի փոփոխության, քաղաքաշինական նպատակներով առանձին հողամասի գործառնական նշանակության փոփոխության վերաբերյալ առաջարկությունը ներկայացվում է մարզպետին: Գործընթացը կարգավորվում է մարզպետի որոշումով, առանց ՀՀ քաղաքաշինության նախարարության հետ համաձայնեցնելու, բացառությամբ.

- ա) Միջպետական և հանրապետական նշանակության ավտոճանապարհների եզրագծից մինչև 50մ հեռավորության վրա գտնվող տարածքներում:
- բ) Հայաստանի Հանրապետության կառավարության 1998 թվականի դեկտեմբերի 21-ի N 812 որոշմամբ հաստատված հատուկ, ինչպես նաև կարևորագույն նշանակություն ունեցող օբյեկտների կառուցման համար նախատեսված տարածքներում:
- գ) Սահմանված կարգով հաստատված պետական ցուցակներում ընդգրկված պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների պահպանական գոտիներում:
- դ) Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի (այդ թվում պետությանը տրամադրված վարկային և դրամաշնորհային) միջոցների հաշվին կամ դրանց ներգրավմամբ կառուցման համար նախատեսված օբյեկտների տարածքներում: